ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ԿՃ-19.1» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Ջերմուկ «25» նոյեմբերի 2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Արսեն Գառնիկյան
Անդամներ՝ Ստեփանոս Վարդանյան
Վահե Ղազարյան
Քարտուղար՝ Սմբատ Պապոյան

1. Տեղեկություններ «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ԿՃ-19.1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Արսեն Գառնիկյան)

2. Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված:

2.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին հրավերի և հայտարարության տեքստերը 12.11.2019թ.-ին տեղադրվել են www.armeps.am կայքում:

3. Հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, որ Ջերմուկի համայնքապետարանի կարիքների համար նախագծա-նախահաշվային աշխատանքների համար հայտ են ներկայացրել 3 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	Ա/Ձ Անահիտ Գևորգյան
2	Ա/Ձ Լարիսա Նալբանդյան
3	«Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ

4 Փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ՝

4.1 Հայտ ներկայացրած մասնակիցները հայտը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան, բացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը, որոնք կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:
Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց մասնակիցների գնային առաջարկները

Մասնակցի		
Հ/Հ	անվանումը	ներկայացրած գնային առաջարկը/դրամ
Չ/Բ 1	Ա/Ձ Անահիտ Գևորգյան	1950000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ

Չ/Բ 1	Ա/Ձ Լարիսա Նալբանդյան	1900000(մեկ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ
Չ/Բ 2	Ա/Ձ Անահիտ Գևորգյան	2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ
Չ/Բ 2	Ա/Ձ Լարիսա Նալբանդյան	1950000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ
Չ/Բ 2	«Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ	890000 (ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ

4.2 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝ 1-ին չափաբաժնի համար մասնակիցներ՝ Ա/Ձ Անահիտ Գևորգյանը և Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը ս/թ-ի նոյեմբերի 19-ին հրավիրվել էին ս/թ-ի նոյեմբերի 22-ին ժամը 11:00-ին կայանալիք բանակցություններին, 1-ին չափաբաժնի համար նախահաշվային գնից ավելի բարձր գին առաջարկելու պատճառով: Հիմք ընդունելով Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի բանակցություններին չներկայանալը և Ա/Ձ Անահիտ Գևորգյանի կողմից ստացված գրությունը առ այն, որ 1-ին չափաբաժնի համար իր կողմից առաջարկվող գնային առաջարկը մնում է անփոփոխ, 1-ին չափաբաժնի մասով մրցույթը համարում ենք չկայացած:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

5.1 Գնային առաջարկի գնահատման արդյունքում 2-րդ չափաբաժնի համար գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

5.2 ՀՀ կառավարության 2017թ թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացների կազմակերպման սահմանված կարգով առաջարկել «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղն զբաղեցրած մասնակցի որակավորման ճափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկելուց հետո, ոչ ուշ քան վերը նշված փաստաթղթերի պատճենները և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելու հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ Արսեն Գառնիկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ստեփանոս Վարդանյան

Վահե Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սմբատ Պապոյան